տուածաչնչի վերջում գրած ոտանաւորի մէջ յիշում է Ծռազատկի դէպքը(*)։

Կոստանդին Կեսարացու ներկայութիւնից օգտուելով, որ կաթուղիկոսի նուիրակն էր, արևելեան եպիսկոպոսներն ու վարդապետները Ստեփանոս Օրբէլեանի գլխաւորութեամբ «մաղթանաց, նաև ողջամիտ հաւատոյ և կարգաց» մի թուղթ են ուղարկում կաթուղիկոսին, խնդրելով փարատել իրենց տարակոյսները ստացուած լուրերի մասին։ Թղթի հեղինակը Ստեփանոս Օրբէլեանն է, բայց գրուած «միաբան խորհրդով եպիսկոպոսաց աշխարհիս և իշխանաց»։ Ո՞րտեղ է եղել այդ խորհուրդը, Օրբէլեանը տեղեկութիւն չէ տալիս, բայց հաւանօրէն Սիւնեաց աթոռանիստ Նորավանքում։ Մեզ համար հետաքրքրականն այն է, որ այս խորհրդին մասնակից են Գլաձորի ուսուցչապետները՝ Եսայի և Դաւիթ, ինչպէս Պռոշեան տոհմի ժամանակակից իշխանները՝ Պապաք և եղբօրդին Էաչէ(**)։ Պահուած է Օրբէլեանի մէջ, կայ և առանձին, միաբանութեան ձեռնարկը, մասնակիցների ստորագրութեամբ, ըստ № 94/3276ի օրինակի՝ նաև Խաչատուր Կեչառեցու, որ չունի Օրբէլեանը։

Բայց այս թուղթը չունեցաւ իւր գրական հետեւանքը. դորա ապացոյց կարող է լինել Օրբէլեանի մեծ Հակաճառութիւնը, գրուած ՉԾԱ (=1302) թուին. ընդհակառակ Անաւարզեցին օգտուելով Կիլիկիայի ժամանակաւոր խաղաղութիւնից, արդէն բացարձակ կերպով սկսեց հետամուտ լինել իրագործելու իւր ծրագիրը, գրելով թղթեր արևելեան եպիսկոպոսներին և վարդապետներին, ունենալով և իւր նուիրակը Հայաստանում. այդ ժամանակից ունինք Անաւարզեցու մի մակագրութիւնը Էջմ.ի № 500 (Կար. 517) Ներսէս Շնորհալու և ուրիշների թղթերի մի ժողովածուի մէջ, որ նա ուղարկել էր Եսայի Նչեցուն. «Տր. Գրիգորիս ծառայ այ. և ողորմութիւ. Նորին կաթողիկ ա. հայոց՝ ընձաեցի զգիրս Եսայի վդ.ին ի ձեռն մեր հաւատարիմ լիկատին տր. Կոստանդեայ արքեպիսկոպոսին Կեսարու. առաքեալ յարևելս. ի թվիս ՉԾԴ» (պատկ. 228)(***)։ Անաւարզեցին մտադիր էր ժողով գումարել և ընդունել տալ իւր ծրագիրը թագաւորի օգնութեամբ, բայց մահը (1306 թ.) արգելք հանդիսացաւ։ Սսոյ ժողովը, որի անդամները չնչին բացառութեամբ Կիլիկիայի եպիսկոպոսներից էին, նոր կաթուղիկոսի ընտրութեան հետ, ընդունեց և Անաւարզեցու Հեթումին գրած թղթի իննը կէտերը։

Բայց այս որոշումները ոչ միայն չիրագործուեցան, այլ և մեծ չփոթութիւն յառաջ բերին ժողովրդի մէջ. ժամանակակից Թումաս գրիչը շատ պարզ կերպով նկարագրում է քաղաքականի հետ և կրօնական խառնակ վիճակը ՉԾ–ՉԾՉ (1301–1307) թուերին արևելեան Հայաստանում և Կիլիկիայում. տխուր կացութիւնն աւելի ծանր է, «զի միաբք ընդ մեզ պատերազմին, ոչ միայն այլասեռ քրիստոնեայք վիճին ընդ մեզ վս. հաւատոյ, այլ և մեր իսկ թագաւոր և

Պատկեր 222.

կաթուղիկոս հանել ջանան զմեզ յաւանդութենէ սրբոյն Գրիգորի»(*)։ Շփոթութիւնը շարունակւում է և յետագայ տարիներում, մեզ չեն հասել ոչ Գրիգոր Անաւարզեցու արևելեան եպիսկոպոսներին եւ վարդապետներին ուղարկած թղթերը եւ ոչ նորա յաջորդ Կոստանդին կաթուղիկոսինը. բայց Սիւնեաց և Պռոշեանց եպիսկոպոսների եւ վարդապետների պատաս-

(*) Անաւարզեցին կաթուղիկոսացաւ 1293 թուին՝ նոյն թուի առաջին ամիսներում դեռ եւս եպիսկոպոս էր Անարզաբայում (Յուց. Լալայեանի, 114)։ Հեթումի Աստուածաշունչն է Ձեռ. Էջմ. № 157/180 (Կար. 151)։ Անաւարզեցու նորամուծութեանց մասին Օրբէլեան. Ղուկ. հրատ. 447։

(**) Օրբէլեան 447։

(***) Տես և մեր Քարտէզ հայ հնագրութեան § 116 եւ Տախտ. Հզ։

(*) Ձեռ. Երուս. № 1303։